ճշմարիտ որ շատ գրաւիչ է, որի ձայնը մինչև Գարայ—նի է հասել, խանը ևս լսել է։

Էջմիածնում մի ճեմարան կայ, բայց Արարատեան դաշտում մոտաւորապէս տասն և ութ հազար բնակչաց համար, բացի Իգդիրից, ոչ մի ուսումնարան չը կայ։ Ապարանում մօտ քսան և հինգ հազար բնակիչների համար մի պարրական ուսումնարան չը կայ. Գառնի Բասարումը մօտ քսան հազար բնակիչների համար մի տարրական ուսումնարան չը կայ։ Դարաչիչակ գաւառում մօտ տասն և չորս հազար բնակիչների համար մի ուսումնարան չը կայ. Գեօկչայ գաւառի մօտ տասն և վեց հազար բնակիչների համար մի ուսումնարան չը կայ. Գանձակի գիւղերում առաջ վեց ուսումնարաններ կային, այժմ համարեա բոլորը փակվել են։ Բայց կան վարձկան թէմական տեսուչներ, որոնք թէև թեմի համար են ստեղծուած, բայց միշտ ապրում են քաղաքներում։ Ի՞նչ բան ունեն այդ պարոնները քաղաքներում, կարծեմ թեմը քաղաք չէ նշանակում։ Իսկապէս թեմական տեսչի պարքն է ամբողջ տարին իւր թեմումը լինել, գիւղից գիւղ, ուսումնարանից ուսումնարան շրջելով, փորձնական դասեր խօսել, մանաւանդ մեր վարժապետների նկատմամբ։ Բայց թեմական տեսուչները քաղաքներում մնում են իւրեանց երկրորդական շահերի համար։ Պաշտօնին նուի-